

եւ Աւստրիայի մէջ տեսակ մը զրաւոր դաշնակցութիւն կայ, որ պիտի վճռէ Բաւկանեան թերակղզոյն քախտը: Մենք կը հաւատանք կա՞մ աւելի հաւատալ կ'ուզենք Գոլուխովսկի կոմսին, որ կերպապէս մերժեց այս դաշնակցութեան գոյութիւնը. սակայն ռուսական-գաղղիական դաշնակցութիւնն ալ ժամանակ մը ուրացուեցաւ, եւ այսօր կայ: Ներքեակ նիգալակցութեան կապերը քիչ մը թոյլցած կ'երեւան, քանի որ Կայսրն ալ իւր գահաժողին մէջ յիշատակութիւն չըրաւ, ինչպէս սովորաբար կ'ըլլար: Դիւանագէտներու գործն ալ կը դժուարանայ, եւ պատճառն իրենք են, քանի որ ձգմադիտ, անշահախելիք, հպատակաց քարօրութիւնը տաժող դիւանագիտութեան փոխանակած է՝ նշող եւ ինքնախելիքի սուտ դիւանա-տգիտութիւն մը:

Իռաւիյա: Գաղտնի եւ հրապարակա՝ հասարակապետութիւն կը քարոզուի տարիներէ ի վեր՝ ընկերվարականաց ձեռքը: Միլան քաղաքը պատերազմի դաշտի կը նմանէր, զինուորներ ու սինկոր իրարու կը զարնուէին, փողոցներու վրայ պատուարներ կանգնած՝ ասոնց ետեւէն եւ տանիքներու վրայէն քար ու հրացան կը նետէին իրարու վրայ: Բնականապէս ամէն խստութիւն ի գործ դրուեցաւ, անմիջապէս պաշարման վիճակի ենթարկուեցաւ քաղաքը: Հարիւրաւորներով կը հաշուին մոնեալներն ու վիրաւորները:

Ժայռագոյն Արեւելք: Ժապոն կը քաշուի՝ պատերազմի սուզանքի վճարման իբր գրաւական առած նաւահանգստէն, Անգլիա կը պատրաստուի մոնել նոյն տողը, Գաղղիա խոժոռ կը նայի: Բայց յամենայն դէպս Անգլիա պիտի ջանայ հասնիլ իւր նպատակին, եւ զօրաւոր նեցուկ ունի իրեն ժապոնն ու Միացեալ Նահանգները: Ներքեակ նոր նիգալակցութիւն մը կը պատրաստուի: Որչափ ա-

տելի է այս պատերազմ՝ անուանեալ հրէջք, նոյնչափ կարծես անխուսափելի կը դառնայ օրէ օր: Թունական եւ Սպանիական պատերազմները մասնական էին եւ մնացին, քայց Եւրոպական մեծ տէրութեանց ապագայ պատերազմն ընդհանուր հրդեհի մը կերպարանքը պիտի առնու: Եւ միւր ըսածը լոկ գուշակութիւն չէ . . . :



ԲՈՎԱՆԴԱՌԻԹԻՆ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՅԳՐԱԿԱՆ — Զանի մի խօսք սաղմական հայ հնագրութեանց մասին. 161: — Անարա մը հայ հնագրութեան վրայ (պատկերազարդ). 163:

ՊԱՏՄԱԿԱՆ — Փաւստոս Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը. 169:

ԼԵՃՈՒՆԱՐԱՄԱԿԱՆ — Եւգրիկոյ Հայոց գաւառաքաղաքը. 174:

ՄԱՏԵՆԱՐՕՍՄԱԿԱՆ — Եւսեմեայ եկեղ. պատմութեան ասորի քննադէպ՝ համեմատուած հայերէնին հետ. 175:

ԱՃԵԼՈՒՑ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ. 180:

ԱՋԳԱՅՈՒ ԹԵՐԹԵՐԷ ԺԱՂՅԷՓՈՒՆ. 1. Ի Սրապեան նկարիչը: — 2. Պր. Պողոսեան հետեւորդներ կը գտնէ: — 3. "Շղթայական օգնութիւն": — 4. Մ. Խորենացոյ քննադատութեան առթիւ: — 5. "Մասիս", ազգային հիւանդանոցի համար: — 6. Դր. 8. Թիքաքեան: — 7. "Բիւրակն", վերստին կը հրատարակուի: — 8. Պարոնեանի ժառանգները գտնուեցան: — 9. Գորդների միութիւն: — 10. Մոսկուայի Կ. Զ. Ը. կրկնող նիստը: — 11. Ի Գեղոյ Բանանեանի հարստութիւնը: — 12. Գեղեցիկ, քայքայեալ լեռեր: — Ի Վ. Է. Գաղստոն, եւ Ի Պրոք. Փր. Միւլլը: — 14. "Բիւզանդիստիկ մեր վերջին պատասխանը: — 15. Երկու անկեղծ ծնարար գիտնականներ: — Օգտակար գիտելիքներ. 185:

ԲԱՂԱՔԱՆԵՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 190:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒՑ ԵՒ ՊԱՏԱՆԱՏԱՏՈՒ ԽՐԱԿՈՐ

Ի. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ

ՎԵՆԵՆ, ՄԻԻԲԱՐԵՆԱՆ ԳԳԱՐԱՆ